

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« ---» ----- 2021թ.

N--- -Ա

### ՈՐՈՇՈՒՄ

**«ՀՐԱԶԴԱՆ ԳԵՏԻ ԵՎ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԼՃԻ ԱՌԱՓՆՅԱ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ  
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքի 3-րդ հոդվածի դրույթները և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետով, ինչպես նաև Վարչապետի 2021 թվականի հունվարի 18-ի թիվ 35-Ա որոշմամբ՝

#### **Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել «Հրազդան գետի և Երևանյան լճի առափնյա տարածքների մաքրման բնապահպանական 2022 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. 2022 թվականի բյուջետային գործընթացով սահմանված կարգով և ժամկետներում հաստատված ծրագիրը և դրա գծով Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու հայտը ներկայացնել Շրջակա միջավայրի նախարարություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ՀՐԱՋՂԱՆ ԳԵՏԻ ԵՎ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԼՃԻ ԱՌԱՓՆՅԱ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐՈՎ ԿԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Երևան քաղաքում գլխավոր մակերևութային ջրերի ավազաններն են Հրազդան գետը և Երևանյան լիճը (Հրազդան գետից ստեղծված արհեստական լիճ), որոնք լուծում են ոչ միայն քաղաքի ոռոգման պաշարների ապահովման խնդիրը, այլև մեծ նշանակություն ունեն շրջապատի միկրոկլիմայի և քաղաքային ռեկրեացիոն գոտու ձևավորման համար:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համաձայն՝ «ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎՈՂ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԿԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» 2001 թվականի մայիսի 15-ի ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի «ա» ենթակետի՝ համայնքի վարչական սահմաններում գտնվող ջրային և օդային տարածքներում ընկերությունների գործունեությամբ պայմանավորված՝ բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը և շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները՝

- շրջակա միջավայրի տեղական և տարածաշրջանային աղտոտվածության դեմ պայքար,
- ջրային ռեսուրսների (մակերևութային և ստորերկրյա) պահպանության,
- ջրային ռեսուրսների և դրանց էկոհամակարգերի պահպանման գոտիների մաքրման

միջոցառումները Երևան համայնքում գործող արտադրական ձեռնարկությունների հետևանքով շրջակա միջավայր, այդ թվում՝ օդային ավազան վնասակար նյութերի արտանետման համար բնապահպանական վճարներից համայնքին հատկացված մասհանումների միջոցներով:

Ծրագրի իրականացումը բխում է «Կանաչ Երևան» գործողությունների ծրագրի բնապահպանական միջոցառումներից (հաստատվել է Երևան քաղաքի ավազանու 12.09.2017թ. հ.21-Ա որոշում), որոնք ուղղված են համայնքների կայուն զարգացմանը, համայնքի բնակավայրերի բարեկարգմանը և կանաչապատմանը, աղբահանությանը, կոմունալ տնտեսության աշխատանքների բարելավմանը, շրջակա միջավայրի և հանրային առողջության պահպանությանը:

Ծրագիրը նաև նպատակաուղղված է «Ռեկրեացիոն նպատակով ջրօգտագործման վայրերում մակերևութային ջրային ռեսուրսների ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N2.1.5.001-18 սանիտարական կանոնների և նորմերի, ինչպես նաև «Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N2.1.7.003-10 սանիտարական կանոնների և նորմերի պահանջների ապահովմանը Երևան քաղաքում:

Համաձայն «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի՝ Երևան համայնքում գործող արտադրական ձեռնարկությունների հետևանքով շրջակա այդ թվում օդային ավազան վնասակար նյութերի և միացությունների արտանետման համար բնապահպանական վճարներից համայնքին հատկացված մասհանումների միջոցները 2022 թվականի համար կազմում են **60430.0** հազար դրամ: Այս գումարի շրջանակներում նախատեսվում է Հրազդան գետի վրա աղբաորսիչ միջոցառումների իրականացման և ճաղավանդակի տեղադրման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում (1000.0 հազար դրամ), աղբաորսիչ միջոցառումների իրականացում և ճաղավանդակի տեղադրում (3000.0 հազար դրամ) և շուրջ 12540 տ թափոնների հավաքագրում և տեղափոխում (**56430.0** հազար դրամ): Հաշվի առնելով գետի աղտոտվածությունը Ծրագրով առաջարկվում է Երևանի քաղաքապետարանին արտաքին աղբյուրներից գտնել և համաֆինանսավորել շուրջ 12540տ թափոնների հավաքագրման և տեղափոխման համար նախատեսված գումարին (**56430.0** հազար դրամ) համաչափ գումար, ինչի արդյունքում կմաքրվի կրկնակի ծավալ շուրջ 25080տ:

Արդյունքում ակնկալվում է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի՝ Երևան համայնքում գործող արտադրական ձեռնարկությունների հետևանքով շրջակա այդ թվում օդային ավազան

վնասակար նյութերի արտանետման նյութերի և միացությունների արտանետման համար բնապահպանական վճարներից համայնքին հատկացված մասհանումների միջոցներով իրականացնել **60430.0** հազար դրամ գումարի չափով աշխատանքներ, որին կավելանա արտաքին աղբյուրներից համաֆինանսավորվող **56430.0** հազար դրամ: Ամբողջական ծրագրի գումարը կկազմի **112860.0** հազար դրամ:

Ծրագիրը համաձայնեցվել է Շրջակա միջավայրի և Առողջապահության նախարարությունների հետ:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ՀՐԱԶԴԱՆ ԳԵՏԻ ԵՎ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԼՃԻ ԱՌԱՓՆՅԱ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Հրազդան գետի և Երևանյան լճի առափնյա տարածքների մաքրման բնապահպանական 2022 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները» ծրագիրը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի անհրաժեշտություն չի առաջանում:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ՀՐԱԶԴԱՆ ԳԵՏԻ ԵՎ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԼՃԻ ԱՌԱՓՆՅԱ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Հրազդան գետի և Երևանյան լճի առափնյա տարածքների մաքրման բնապահպանական 2022 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսական համամասնությունները» ծրագիրը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

**ՀՐԱՋՂԱՆ ԳԵՏԻ ԵՎ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԼՃԻ ԱՌԱՓՆՅԱ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ  
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ 2022Թ. ԾՐԱԳՐՈՎ ԼԱԽԱՏԵՄՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՑՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ  
ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Հրազդան գետի և Երևանյան լճի մաքրման բնապահպանական ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) կազմվել է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի «ա» կետի պահանջներին համապատասխան:

Ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել «Կանաչ Երևան» գործողությունների ծրագրի բնապահպանական միջոցառումները (Երևան քաղաքի ավագանու 12.09.2017թ. հ.21-Ա որոշում), որոնք ուղղված են համայնքների կայուն զարգացմանը, համայնքի բնակավայրերի բարեկարգմանը և կանաչապատմանը, աղբահանությանը, կոմունալ տնտեսության աշխատանքների բարելավմանը, շրջակա միջավայրի և հանրային առողջության պահպանությանը:

Սույն Ծրագրով ներկայացվում է Հրազդան գետի և Երևանյան լճի աղտոտվածության ներկայիս մակարդակը, ռեկրեացիոն գոտում առողջապահական և բնապահպանական նորմերի վերականգնման կարևորությունը և մաքրման աշխատանքների իրականացման էությունը: Ծրագրով նպատակ է հետապնդվում մաքրել Երևանյան լճի և Հրազդան գետի առափնյա տարածքները, բարեկարգել հարակից տարածքը և ռեկրեացիոն գոտին վերածել Երևան քաղաքի սիրված ու հաճելի այցելության վայրերից մեկը:

Ծրագիրն ունի էկոհամակարգի և կենսաբազմազանության պահպանման, ինչպես նաև ռեկրեացիոն գոտու առողջապահական նորմերի ապահովման ուղղվածություն: Հետագայում, խնդրի հիմնովին լուծման համար անհրաժեշտ է գետի երկայնքով կառուցել գետ լցվող կենցաղային և արդյունաբերական կեղտաջրերի հեռացման կոլեկտորադրենաժային համակարգ, որը պահանջում է մեծ կապիտալ ներդրում և սույն ծրագրի առարկան չէ:

Սույն Ծրագրով նկարագրվում են Երևանյան լճի և Հրազդանի կիրճի էկոլոգիական վիճակի բարելավման և ռեկրեացիոն գոտու վերականգնման մի շարք միջոցառումներ, որոնք թույլ կտան կանխել Երևանյան լճի մեջ կենցաղային աղբի, լողացող մարմինների մուտքը, ինչը կարող է ունենալ բացասական հետևանքներ ինչպես գետում և լճում առկա ջրային պոպուլյացիաների զարգացման, այնպես էլ ազգաբնակչության առողջության պահպանման համար, հատկապես ներկայիս համավարակի գլոբալ տարածվածության պայմաններում: Ծրագրի ավարտից հետո նախատեսվում է Հրազդանի կիրճի և Երևանյան լճի ափամերձ տարածքները բարեկարգել, առանձնացնել հեծանվաուղիներ և պատշաճ տեսքի բերել կանաչ տարածքները՝ առավել զրավիչ դարձնելով բնակչության և զբոսաշրջիկների համար:

## 2. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ներկայումս Հրազդան գետի և Երևանյան լճի աղտոտվածությունը հիմնականում պայմանավորված է մեծ քանակությամբ կենցաղային և պոլիէթիլենային աղբի, ներհոսող կոմունալ-կենցաղային և գյուղատնտեսական կեղտաջրերի շնորհիվ տարբեր քիմիական տարրերի ՍԹԿ նորմերի նկատմամբ բարձր պարունակությունների առկայությամբ:

Հրազդան գետը մուտք է գործում Երևան աղտոտիչների արդեն իսկ բավականին բարձր կոնցենտրացիաներով՝ գետի վերին հոսանքների մոտ կենցաղային, արդյունաբերական և գյուղատնտեսական գործունեության հետևանքով: Այնուամենայնիվ, աղտոտման մակարդակները նշանակալիորեն ավելանում են Երևանի միջով հոսելիս, Երևանի տարածքում «Գրանդ Սան» և «Արմենալ» գործարանները ջրի արդյունաբերական աղտոտման գլխավոր աղբյուրներն են: Ջրահավաք ավազաններում կենցաղային, գյուղատնտեսական և հանգստի նպատակներով ջրի օգտագործումը ևս բացասական ազդեցություն է ունենում ջրի որակի վրա, քանի որ դրա հետևանքով ջրի մեջ հայտնվում և հոսում են ֆիզիկական, քիմիական և կենսաբանական ծագման տարբեր աղտոտիչ նյութեր: Կոյուղու բացթողի անցքերը Հրազդան գետի երկայնքով ջրի աղտոտման լրացուցիչ աղբյուր են, քանի որ կեղտաջրերը թափվում են գետի մեջ առանց մաքրման: Կեղտաջրերի մաքրման հիմնահարցը նկարագրված է ստորև՝ որպես մակերևութային ջրերի որակի էական մարտահրավեր:

Աղտոտման մասնակի պատճառն էլ, թերևս, գետը նետվող աղբն է: Աղբի որոշ մասը կարելի է վերագրել գետի վերին հոսանքներին մոտ տեղակայված բնակելի հատվածներին: Հարկ է նշել, որ մակերևութային ջրերի որակը տարվա ընթացքում հաստատուն չէ և կապված է եղանակային պայմանների հետ: Օրինակ, տևական անձրևներից հետո ջրի որակը գետում ժամանակավորապես վատթարանում է:

Երևանյան լիճը արհեստական ջրամբար է, ոռոգման ջրի պահոց կառուցված Երևանի տարածքում՝ Հրազդան գետի վրա: Մակերեսը 650000 ք.մ է, միջին խորությունը՝ 8 (առավելագույնը՝ 18մ): Ջրամբարի ստեղծման նպատակը Հրազդան գետի հոսքի կարգավորումն է և ջրերի օգտագործումը: Պատվարը հողային է՝ երեսպատված երկաթբետոնե սալիկներով, երկարությունը՝ 480մ, առավելագույն բարձրությունը՝ 29մ: Երևանյան լճի 65 հեկտարանոց հայելին մեծ նշանակություն ունի շրջապատի չոր ու շոգ կլիման մեղմելու և քաղաքային հանգստի գոտու ձևավորման համար: Երևանյան ջրամբարից ջրի ընդհանուր բացթողումների ծավալը կարող է հասնել 286 խորանարդ մետր վայրկյանում: Ջրամբարն ունի վեց ջրարգելակ: Լճի ջրի մակարդակի առավելագույն նիշը 908 մետր է: Դրանից բարձր մակարդակի դեպքում ստեղծվում է վթարային վիճակ: Առավելագույն նիշի ժամանակ լճի ընդհանուր տարողությունը կազմում է 4.8 միլիոն խորանարդ մետր: Լճի պատվարը կամրջի դեր է կատարում Երևանի աջափնյա և ձախափնյա շրջանների միջև: Ոռոգման ջուրը բաց է թողնվում աջ ափին կառուցված հատակային ջրթողքի միջոցով: Լճի աջ ափի երկարությամբ (364 մ) կառուցվել է խրամատային ջրընդունիչ՝ լողացող մարմինները հեռացնելու նպատակով: Լճի ափերը մասնակիորեն բետոնապատված են: Կանոնավորվել է Հրազդանի վերին հոսանքի ազատ հոսքը, լճից սկսվում են Էջմիածնի և Փարաքարի ջրանցքները: Դրանք հոսում են գետնի տակով և դուրս գալիս Մալաթիա-Մեբաստիա վարչական շրջան: Միաժամանակ եղեգներով պատված տարածքը Հրազդան գետի ու Երևանյան լճի շրջակայքում կազմում է 15 հա, որից 10 հա բաժին է հասնում Երևանյան լճին (Նկար 1):

Հրազդան գետը սկիզբ է առնում Սևանա լճից, հոսում հարավ-արևմտյան ընդհանուր ուղղությամբ, անցնում է Հայաստանի Հանրապետության չորս վարչական տարածքներով, այդ թվում՝ հանրապետության կենտրոնական մասով՝ մայրաքաղաք



**Նկար 1. Հրազդան գետում և Երևանյան լճում եղեգներով զբաղեցված տարածքները**

Երևանով, և Արարատյան գոգահովտով: Ունի 141 կմ երկարություն: Ավազանի մակերեսը 2650 կմ<sup>2</sup> է (առանց Սևանա լճի): Հրազդանի վրա կառուցվել են Սևանի, Աթարբեկյան, Գյումուշի, Արզնիի, Քանաքեռի, Երևանի ՀԷԿ-երը, մի շարք ջրանցքներ, Երևանյան լիճը:

2006թ. Երևանի քաղաքապետարանի պատվերով №ԱՇՎԲ-06/40 պայմանագրով «ՀԱՅՁՐՆԱԽԱՍԳԻԾ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲ ընկերության կողմից կազմվել են «Երևանյան լճի մաքրման աշխատանքներ» նախագծանախահաշվային փաստաթղթերը, որոնց համաձայն՝ Երևանյան լիճը գտնվելով քաղաքի տարածքում, գոյության շուրջ 50 տարիների ընթացքում իր մեջ կուտակել է Հրազդան գետի և նրա Գետառո, Ողջաբերդ և Ջրվեժ վտակների միջոցով տեղափոխվող գետային բերվածքները, քաղաքի կենցաղային և արդյունաբերական թափոնների զգալի մասը:

**Աղ. 1. Երևանյան լճի և Հրազդանի գետի հունի երկայնքի բերվածքների ծավալները («Երևանյան լճի մաքրման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ», պայմանագիր №ԱՇՂԲ-06/40, Երևան, 2006թ.), հազ. մ<sup>3</sup>**

h/h	Տարածքի անվանումը		Քանակը
1	Լճի աջ ափի տարածք		541.0
	Լճի աջ ափի տարածք	Լճի մեռյալ ծավալ	268.0
		Լճի թասի վերին շերտեր	273.0
2	Պատվարի վերին բիեֆի տարածք		96.0
3	Հրազդան գետի հունի երկայնքով տարածք («Քանաքեռ ՀԷԿ»-ից մինչև Երևանյան լճի պատվարն ընկած հատվածը)		216.0
<b>Ընդամենը</b>			<b>853.0</b>


Երևանյան լճի թասի աջ լանջում կուտակված բուսածածկ տարածքների ծավալները կուտակված բերվածքներով, կենցաղային աղբով և արտադրական թափոններով (Աղ. 1) կազմում են 541.0 հազ. մ<sup>3</sup>, որոնց ծավալները վերջին 15 տարիների ընթացքում ավելացել են և դրանց կեսը գտնվում է լճի մեռյալ ծավալի գոտում: Մեխանիկական մաքրման առաջնահերթ անհրաժեշտության ենթակա բերվածքների և արտադրական թափոնների ծավալը, որոնք գտնվում են լճի թասի վերին շերտերում և ենթարկվելով ջերմային ու մթնոլորտային ազդեցության վնասակար ազդեցություն են ունենում առափնյա միջավայրի և լճի որակի վրա, կազմում է 273.0 հազ. մ<sup>3</sup>, ինչը ևս վերջին 15 տարիների ընթացքում ևս ավելացել է: Հրազդան գետի հունի երկայնքով բուսածածկ տարածքների ծավալները կուտակված բերվածքներով, կենցաղային աղբով և արտադրական թափոններով կազմում են 216.0 հազ. մ<sup>3</sup>, որի լայնությունը 25-30 մետր է, խորությունը մինչև 3.0 մ:

Համաձայն 2006թ. հաշվետվության Հրազդան գետի առափնյա տարածքներում գտնվող թաղամասերից, արդյունաբերական և կենցաղային բնույթի օբյեկտներից շուրջ 40 հատվածներում թափվում են կենցաղային և արդյունաբերական օբյեկտներից հոսքաջրեր, գումարային շուրջ 15 մլն.մ<sup>3</sup> միջին տարեկան ծավալով: 2005-2006թթ. Երևանյան լճի ջրի և նստվածքների խորը շերտերի հիդրոքիմիական անալիզները ցույց են տվել, որ դրանք պատկանում են հիդրոկարբոնատ-սուլֆատ-քլորիդային, նատրի-մագնի-կալիական դասին, որով և պայմանավորված է լճում տեղի ունեցող օքսիդացման շարունակական գործընթացը:

Երևանյան լճի ջրի նստվածքների և Հրազդան գետի ջրի հիդրոքիմիական անալիզների միջինացված տվյալների և ջրավազանների համար սահմանված ՍԹԿ-ի հետ համեմատության վերլուծության արդյունքում պարզվել է, որ լճի ջրում և նստվածքներում պարունակվող ծանր մետաղների միացություններից, ՍԹԽ գերազանցում է միայն սնդիկի ցուցանիշը՝ լճի ջրում 2.7-4.9 անգամ, բերվածքներում 1.1-1.96 անգամ, իսկ գետի ջրում 0.8-9.0 անգամ: Մնացած միացությունների բաղադրությունները գտնվում են ՍԹԽ սահմաններում:

Լճի, գետի ջրերում և նստվածքներում, սնդիկի և այլ միացությունների զգալի պարունակությունն ապացուցում է նրանց **մարդածին ազդեցության** հետևանքով առաջացման բնույթը:

Համաձայն ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի 2005թ.-ի հաշվետվության լճի ջուրը չի բավարարում ռեկրեացիոն նպատակներով օգտագործվող ջրավազանների համար սահմանված նորմատիվային պահանջներին, իսկ լճի բերվածքներում պարունակվող մետաղների և նրանց միացությունների չափանիշները գերազանցում են գյուղատնտեսական արտադրությունում օգտագործվող հողերի համար սահմանված նորմատիվային չափանիշները:



*Նկ. 2. Հրազդան գետ՝ Կիևյան կամրջից դեպի Դավթաշեն հատվածը*





*Նկ. 3. Երևանյան լիճ՝ Ամերիկայի դեսպանատան և բենզալցակայանի միջև ընկած տարածք*



*Նկ. 4. Հրազդան գետ՝ Կիևյան կամրջից դեպի Դավթաշեն հատվածը*



**Նկ. 5. Երևանյան լիճ՝ Ամերիկայի դեսպանատան և բենզայացակայանի միջև ընկած տարածք**

Հրազդան գետի և Երևանյան լճի աղտոտվածության մասին են փաստում նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Շրջակա միջավայրի մոնիտորինգի կենտրոնի հրապարակած տվյալները, որի համաձայն Հրազդան գետի տարբեր հատվածները բնութագրվում են ջրի աղտոտվածության տարբեր աստիճանով, մասնավորապես 2020 4-րդ եռամսյակում Երևանից ներքև ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս): 2020 թվականի 4-րդ եռամսյակում Երևանյան լճի ջրի որակը հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), դեկտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս) [http://armmonitoring.am/page/17#hrazdan\\_02](http://armmonitoring.am/page/17#hrazdan_02):

Տվյալները ցույց են տալիս, որ ըստ տեղական չափորոշիչների, Երևան քաղաքի միջով հոսելիս Հրազդան գետի ջրի որակը վատանում է, ինչը կարող է ունենալ բացասական հետևանքներ ջրային պոպուլյացիաների զարգացման և մարդու առողջության համար: Օրինակ՝ մակերևութային ջրերի օրգանական բարձր աղտոտվածությունը ստեղծում է լուծված թթվածնի ավելի բարձր պահանջարկ, որն անհրաժեշտ է գետում ինքնամաքման գործընթացների իրականացման համար: Արդյունքում լուծված թթվածնի կոնցենտրացիան նվազում է, ինչը բացասական ազդեցություն է ունենում ջրային օրգանիզմների զարգացման վրա և կրճատում է դրանց հնարավոր բազմազանությունը: Ավելին, նման աղտոտված ջրում կարող են լինել հիվանդություններ առաջացնող ախտածին մանրէներ: Ախտածինների առկայությունը ջրային հոսանքներում կարող է առաջացնել տհաճ հոտ և հիվանդություններ (օրինակ՝ հեպատիտ, վիրուսային գաստրոէնտերիտ, խոլերա և այլն): Նման ախտածինները կարող են վտանգ հանդիսանալ ջրում լողացող մարդկանց կամ ձկնորսների առողջության համար:

### **3. ԾՐԱԳՐԻ ՆՊՍՏԱԿՆԵՐԸ**

Ներկայացվող բնապահպանական ծրագրի հիմնական նպատակն է բարելավել Երևանյան լճի և Հրազդանի կիրճի էկոլոգիական վիճակը՝ դարձնելով այն ՀՀ օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ պահանջներին բավարարող ռեկրեացիոն գոտի:

Ծրագրի իրականացման նպատակներն են՝

- նվազեցնել կենցաղային թափոնների հետագա մուտքը Հրազդան գետ և Երևանյան լիճ,
- նվազեցնել աղտոտվածության մակարդակը,
- կանխարգելել աղտոտվածության տարածումը:



Նշված աշխատանքների կատարման արդյունքում տարածքը կձառայի Երևան համայնքի համար որպես ռեկրեացիոն գոտի, իսկ Երևան համայնքի սահմաններից դուրս եկող Հրազդան գետը Արարատյան հարթավայրի մյուս համայնքներին կհասնի (Գետափնյա, Գեղանիստ, Նորաբաց, Զորակ, Ղուկասավան, Դաշտավան, Դարակերտ) բնապահպանական տեսակետից առավել մաքուր ոռոգման չափորոշիչներին համապատասխան վիճակում՝ նվազեցնելով գետի և նրա առափնյա տարածքների կենսաբազմազանության (ջրային էկոհամակարգ, թռչուններ) վրա մարդածին բացասական ազդեցությունը: Հրազդան գետի ջրի որակի բարձրացումը կխթանի նաև օրգանիկ գյուղատնտեսության զարգացմանը, որը Երկրի տնտեսության զարգացման կարևոր ռազմավարական ուղղություններից է:

#### **4. ԾՐԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համաձայն «ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎՈՂ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԿԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» 2001 թվականի մայիսի 15-ի ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի «ա» ենթակետի՝ համայնքի վարչական սահմաններում գտնվող ջրային և օդային տարածքներում ընկերությունների գործունեությամբ պայմանավորված՝ բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը և շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները՝

- շրջակա միջավայրի տեղական և տարածաշրջանային աղտոտվածության դեմ պայքար,

- ջրային ռեսուրսների (մակերևութային և ստորերկրյա) պահպանության,

- ջրային ռեսուրսների և դրանց էկոհամակարգերի պահպանման գոտիների մաքրման միջոցառումները Երևան համայնքում գործող արտադրական ձեռնարկությունների հետևանքով շրջակա այդ թվում օդային ավազան վնասակար նյութերի արտանետման նյութերի և միացությունների արտանետման համար բնապահպանական վճարներից համայնքին հատկացված մասհանումների միջոցներով:

Ծրագրի իրականացումը բխում է «Կանաչ Երևան» գործողությունների ծրագրի բնապահպանական միջոցառումներից (հաստատվել է Երևան քաղաքի ավագանու 12.09.2017թ. հ.21-Ա որոշում), որոնք ուղղված են համայնքների կայուն զարգացմանը, համայնքի բնակավայրերի բարեկարգմանը և կանաչապատմանը, աղբահանությանը, կոմունալ տնտեսության աշխատանքների բարելավմանը, շրջակա միջավայրի և հանրային առողջության պահպանությանը: Ելնելով ծրագրի կարևորությունից համայնքն իր միջոցներից կկատարի լրացուցիչ հատկացումներ:

Ծրագիրը նաև նպատակառուղիվ է «Ռեկրեացիոն նպատակով ջրօգտագործման վայրերում մակերևութային ջրային ռեսուրսների ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.1.5.001-18 սանիտարական կանոնների և նորմերի, ինչպես նաև «Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N2.1.7.003-10 սանիտարական կանոնների և նորմերի պահանջների ապահովմանը Երևան քաղաքում:

#### **5. ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ ԵՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ծրագրի շահառուներ են համարվում Երևան համայնքի և Արարատյան հարթավայրի մյուս համայնքների (Գետափնյա, Գեղանիստ, Նորաբաց, Զորակ, Ղուկասավան, Դաշտավան, Դարակերտ) բնակիչները, ինչպես նաև մայրաքաղաք այցելած հյուրերը, զբոսաշրջիկները և այլն:

Ծրագրի իրականացումը հատկապես ներկայիս համավարակի պայմաններում կնպաստի բնակչության առողջության պահպանմանը, քանի որ վերականգնված տարածքներում կավելացվեն և պատշաճ տեսքի կբերվեն կանաչ տարածքները:

## 6. ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՊԸ

Ծրագիրն ուղղված է բնապահպանական և առողջապահական խնդիրների լուծմանը: Ծրագրի իրականացման արդյունքում կլուծվեն Երևան քաղաքի, ինչպես նաև Հրազդան գետով անցնող ազդակիր համայնքների, կանաչ և առավել գրավիչ դարձնելու, բարենպաստ միկրոկլիմայի ստեղծման և բնակչության առողջության պահպանման խնդիրները: Ծրագրի նպատակներին ծառայող հիմնական խնդիրներն են՝

- Կուտակված կենցաղային աղբի և արտադրական թափոնների հեռացումը,
- Աղբաորսիչ միջոցառումների իրականացումը:

## 7. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Ծրագրի իրականացումն իրենից ներկայացնում է հետևյալ միջոցառումների ամբողջություն

- Մաքրել լճի առափնյա տարածքը կենցաղային աղբից և արտադրական թափոններից, որոնք ստեղծում են հակասանիտարական վիճակ լճի և առափնյա միջավայրի համար:
- Կենցաղային աղբի մաքրման աշխատանքներն իրականացնել աղբի տեսակավորմամբ՝ առանձնացնելով պլաստիկը և ապակին:
- Նախատեսել աղբաորսիչ միջոցառումներ և տեղադրել լողացող մարմինները հավաքող ճաղավանդակներ՝ Հրազդան գետի առափնյա թաղամասերից կոյուղու ջրերի, կենցաղային աղբի և լողացող մարմինների մուտքը դեպի Երևանյան լիճ կանխարգելելու նպատակով: Գետի ջրային ավազան լողացող մարմինների (պլաստիկ շշեր, տոպրակներ, տարբեր տիպի փաթեթավորման տուփեր և այլն) մուտքը դեպի լիճ կանխարգելելու նպատակով Հրազդան գետի վրա տեղադրել լողացող մարմինների (կոշտ կենցաղային թափոնների) որսման սարքավորում: Հրազդան գետի վրա կառուցել ճաղավանդակ Երևանյան լճից գետի երկայնքով վերև մոտ 2 կմ հեռավորության վրա գտնվող կամուրջի մոտ:

**Համայնքին հատկացվելիք բնապահպանական վճարներից կատարվելիք մասհանման միջոցով 2022 թ. նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.**

**1. Կենցաղային աղբից և արտադրական թափոններից Երևանյան լճի և Հրազդան գետի առափնյա տարածքի մաքրման աշխատանքներ:**

Աղբի հավաքման և բարձման աշխատանքներն իրականացվելու է էքսկավատորի միջոցով, բարձվելու է ավտոինքնաթափ և բրեզենտով ծածկված տեղափոխվելու է Նուբարաշենի քաղաքային աղբավայր: Հաշվի առնելով առկա ֆինանսական ռեսուրսները ընդհանուր նախատեսվում է շուրջ 12540 տ թափոնների հավաքագրում և տեղափոխում, որի աշխատանքների ծախսը բերված է աղյուսակ 2-ում:

**Աղյուսակ 2. Երևանյան լճի և Հրազդանի գետի առափնյա տարածքի թափոնների հեռացման աշխատանքների ծավալները և գումարը**

Հ/Հ	Տարածքի անվանումը	Քանակ տ	Միավորի արժեքը դրամ	Ընդամենը հազ. դր.
1	Կոշտ կենցաղային աղբի և այլ թափոնների, հավաքում, բարձում ա/հնքնաթափ մեքենա և տեղափոխում 13 կմ դեպի աղբավայր	12540	4500*	<b>56430.0</b>

\* մեքենաների շահագործումը գնահատված են 1984թ. գներով և վերահաշվարկված 2019թ. գներով համաձայն ռուբլուց դրամի անցման գործակիցներով.

Երևանի քաղաքապետարանը նախատեսում է նաև արտաքին աղբյուրներից գտնել և համաֆինանսավորել աղյուսակ 2-ով նշված գումարին համաչափ գումար, որի արդյունքում կմաքրվի կրկնակի ծավալ՝ աղյուսակ 3:

**Աղյուսակ 3. Երևանյան լճի և Հրազդանի գետի առափնյա տարածքի թափոնների հեռացման աշխատանքների ծավալները և գումարը**

Հ/Հ	Տարածքի անվանումը	Ծավալ, տ	Միավորի արժեքը դրամ	Ընդամենը հազ. դր.
1	Կոշտ կենցաղային աղբի և այլ թափոնների, հավաքում, բարձում ա/հնքնաթափ մեքենա և տեղափոխում 13 կմ դեպի աղբավայր	12540	4500*	<b>56430.0</b>
		12540	4500*	<b>56430.0</b>
Ընդհանուր		25080	4500.0	<b>112860.0</b>

**1. Աղբառսիչ ճաղավանդակի տեղադրման աշխատանքներ:**

Հրազդան գետի ջրային ավազան լողացող մարմինների (պլաստիկ շշեր, տոպրակներ, տարբեր տիպի փաթեթավորման տուփեր և այլն) մուտքը դեպի լիճ կանխարգելելու նպատակով Հրազդան գետի վրա նախատեսվում է տեղադրել/կառուցել ճաղավանդակ: Այս աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ կլինի ապահովել նախագծանախահաշվային փաստաթղթերի ստեղծում՝ կիրառելով նորագույն տեխնոլոգիաները: Ճաղավանդակների նախագծման և տեղադրման աշխատանքների արժեքը բերված է աղյուսակ 4-ում:

**Աղյուսակ 4. Երևան քաղաքի տարածքում կենցաղային, արտադրական թափոնների և կոյուղու ջրերի թափոնների հետագա մուտքը Հրազդան գետ և դեպի լիճ կանխարգելման աշխատանքներ ցանցի տեղադրում**

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Չ/մ	Քանակ	Միավ. գինը հազ. դր.	Ընդամենը հազ. դր.
1	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում աղբառսիչ միջոցառումների իրականացման և ճաղավանդակի տեղադրման համար	հատ	1	1000.0	1000.0

2	Աղբաորսիչ միջոցառումների իրականացում և ճաղավանդակի տեղադրում	հատ	1	3000.0	3000.0
	<b>Ընդամենը</b>				<b>4000.0</b>

Արդյունքում ակնկալվում է 2022թ.-ին «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» 2001 թվականի մայիսի 15-ի ՀՀ օրենքի՝ Երևան համայնքում գործող արտադրական ձեռնարկությունների հետևանքով շրջակա այդ թվում օդային ավազան վնասակար նյութերի արտանետման նյութերի և միացությունների արտանետման համար բնապահպանական վճարներից համայնքին հատկացված մասհանումների միջոցներով իրականացնել **60430.0** հազար դրամ գումարի չափով աշխատանքներ, որին կավելանա արտաքին աղբյուրներից համաֆինանսավորվող **56430.0** հազար դրամ: Ամբողջական ծրագրի գումարը կկազմի **112860.0** հազար դրամ:

**Ծրագիրը կրելու է շարունակական բնույթ:**